Տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակում

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե

—

Օգոստոս 2019թ.

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
ՀՀ, Երևան 0010,
Վ. Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի պլազա» բիզնես կենտրոն, 8-րդ հարկ

Հեռ. + 374 (10) 59 59 99
www.kpmg.am

Գաղտնի

Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե

21 օգոստոսի 2019թ.

Հարգելի գործընկերներ,

Պատիվ ունենք Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ «Կոմիտե») ուշադրությանը ներկայացնելու Տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակման մեր առաջարկը:

Հաշվի առնելով Կոմիտեի կարիքները և ակնկալիքները՝ այս առաջարկում ներկայացված են մեր մոտեցումը նախագծի իրականացմանը և մեր ծառայությունների արժեքը: Բացի այդ, առաջարկը ներառում է աշխատանքի շրջանակների նկարագիրը՝ հիմք ընդունելով Կոմիտեի պահանջները և նմանատիպ նախագծերի իրականացման մեր փորձը:

Հարկ ենք համարում նշել, որ ծառայությունների արժեքի մեր գնահատականը կախված է ոչ միայն ենթադրվող ժամանակային ծախսերից, այլև վերլուծության ենթակա տեղեկատվության ծավալից, բարդությունից և որակից:

Ուրախ կլինենք համագործակցել Կոմիտեի հետ և վստահ ենք, որ «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն ունի անհրաժեշտ գիտելիքներ և փորձ նախագիծն առավելագույնս արդյունավետ իրականացնելու համար:

Այս առաջարկին վերաբերող ցանկացած հարցի դեպքում խնդրում ենք դիմել Տիգրան Թորոսյանին (հեռ. +374 (99) 051020, ttorosyan@kpmg.com):

Հարգանքով՝

Զարուհի Ֆուրունջյան
Խորհրդատվական ծառայությունների բաժնի ղեկավար

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի մոտեցումը

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի մոտեցումը

Առաջարկում ենք նախագծի իրականացման հետևյալ փուլերը.

01
Դիագնոստիկ ստուգում՝ գնահատելու համար Կոմիտեի Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (ՏԱԿՀ) համապատասխանությունը ISO/IEC 27001:2013 պահանջներին (անհամապատասխանությունների վերլուծություն)

02
Աջակցություն պլանավորման և ISO/IEC 27001:2013 ՏԱԿՀ-ի բաղադրիչների հայեցակարգի մշակման գործընթացում՝ համաձայն ստանդարտի 4-8 բաժինների պահանջների (ՏԱԿՀ– Հայեցակարգի մշակման փուլ)

03
Աջակցություն տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների, ՏԱԿՀ-ի փաստաթղթերի մշակման գործընթացում՝ համաձայն ISO/IEC 27001:2013 ստանդարտի

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Մոտեցման մանրամասն նկարագիր

Մենք աշխատանքը կիրականացնենք «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի մոտեցման համաձայն երեք առանցքային փուլով՝ դիագնոստիկ ստուգում, պլանավորում և հայեցակարգի մշակում և տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում: Աշխատանքը կիրականացվի երեք փուլով արդյունավետությունը բարձրացնելու և գործընթացների վրա ազդեցությունը նվազեցնելու համար: Այս բաժնի նպատակն է առավել մանրամասն ներկայացնել մեր մոտեցումը վերլուծության փուլում:

Աշխատանքը նախորդող պլանավորում	*Պլանավորում և ՏԱԿՀ-ի բաղադրիչների հայեցակարգի մշակում*	*Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում*
Դիագնոստիկ ստուգման փուլ	Հայեցակարգի մշակման փուլ	Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակման փուլ

Շրջանակները

Առաջադրանք 1. Տեղեկատվական անվտանգության համակարգի ուսումնասիրություն

- Հարցազրույցներ ղեկավարության համապատասխան ներկայացուցիչների և աշխատակիցների հետ՝ տեղեկատվական անվտանգության հսկողության միջավայրի մասին պատկերացում կազմելու համար:
- Դիագնոստիկ ստուգում (անհամապատասխանությունների վերլուծություն) տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի զարգացածությունը գնահատելու համար:
- Առաջարկությունների և գործողությունների ծրագրերի մշակում:

Առաջադրանք 2. Պլանավորում և հայեցակարգի մշակում

- Կոմիտեում ՏԱԿՀ գործողության ոլորտի սահմանում:
- Կոմիտեի տեղեկատվական անվտանգության պահանջների սահմանում:
- Աջակցություն Կոմիտեի անվտանգություն ապահովող տեխնիկական միջոցների և մեթոդների մշակման գործընթացում (Կիրառելիության մասին հաշվետվություն):

Առաջադրանք 3. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում

- ՏԱԿՀ քաղաքականության և անհրաժեշտ հիմունքների սահմանում:
- Տեղեկատվական անվտանգության կազմակերպման գործընթացի և համապատասխան պատասխանատվությունների սահմանում:
- ISO 27001-2013 ստանդարտի և կիրառելի օրենսդրության կամ կանոնակարգերի պահանջներին համապատասխանող տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակում:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Առաջադրանք 1. Դիագնոստիկ ստուգում

Դիագնոստիկ ստուգում (անհամապատասխանությունների վերլուծություն) Կոմիտեի տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի զարգացածությունը գնահատելու համար

Աշխատաքնի շրջանակները

ՏԱԿՀ-ի համաձայնեցված շրջանակների համաձայն՝ անհամապատասխանությունների վերլուծության փուլում կիրականացվեն փաստաթղթերի ուսումնասիրություն, քննարկումներ և հարցազրույցներ:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն կիրականացնի Կոմիտեի տեղեկատվական անվտանգության հսկողության համակարգի և գործընթացների զարգացածության վերլուծություն և կբացահայտի անհամապատասխանությունները ISO/IEC 27001: 2013 ստանդարտի հետ: Կոմիտեն կորոշի և կնշանակի աշխատակիցների, ովքեր կհամակարգեն «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի կողմից գործընթացներում բացահայտված խնդիրների կարգավորման գործընթացը: Թերությունները կվերացվեն Կոմիտեի աշխատակիցների կողմից: «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն կաջակցի թերությունների վերացմանը տրամադրելով կատարելագործմանն ուղղված առաջարկություններ (առանջորդվելով առաջատար պրակտիկայով):



Արդյունքները և տրամադրվող նյութերը

Բացահայտված անհամապատասխանություններ և անհամապատասխանությունների վերացմանն ուղղված առաջարկություններ՝ ISO/IEC 27001:2013 պահանջների հետ համապատասխանություն ապահովելու նպատակով: Մասնավորապես, կներկայացվեն գործընթացների նկարագրերում բացահայտված անհամապատասխանությունները:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Առաջադրանք 2. Պլանավորում և ՏԱԿՀ-ի բաղադրիչների հայեցակարգի մշակում

Կոմիտեի տեղեկատվական անվտանգության պահանջների սահմանում և անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցների և մեթոդների մշակում (Կիրառելիության մասին հաշվետվություն)

Աշխատաքնի շրջանակները

Հայեցակարգի մշակման փուլում կսահմանվի ՏԱԿՀ գործողության ոլորտը Կոմիտեում: Շրջանակները և հայեցակարգը կսահմավեն գնահատելով Կոմիտեի և վերջինիս «հաճախորդների» տեղեկատվական անվտանգության պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև իրավական պահանջները և ISO27001 հավաստագիր ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը: ՏԱԿՀ-ի տեսանկյունից հաշվի կառնվի առնվազն հետևյալը.

- ՏԱԿՀ-ի շրջանակները,
- Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը և նպատակները,
- Ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը,
- Կիրառելիության մասին հաշվետվությունը,
- Ռիսկերի կառավարման պլանը,
- Ռիսկերի գնահատման հաշվետվությունը,
- Անվտանգության գծով դերերի և պատասխանատվությունների սահմանումը,
- Ակտիվների գույքագրումը,
- Ակտիվների թույլատրելի օգտագործումը,
- Մուտքի կառավարման քաղաքականությունը,
- Գործառնական ընթացակարգերը տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համար,
- Անվտանգության համակարգի նախագծման սկզբունքները,
- Մատակարարների անվտանգության քաղաքականությունը,
- Պատահարների կառավարման ընթացակարգը,
- Գործունեության անընդհատությունն ապահավող ընթացակարգերը,
- Իրավական, օրենսդրական և պայմանագրային պահանջները:

Անվտանգությանը չվերաբերող ոլորտները չեն դիտարկվի: Այս շրջանակները որպես հիմք ընդունելով՝ հնարավոր է որոշել, թե արդյոք պետք է առանձին գնահատել գործառնությանը բնորոշ անվտանգության պահանջները, քանի որ դրանք պահանջում են կառավարման համակարգի փոփոխություն: Տեղեկատվությունը ձեռք կբերվի Կոմիտեի ղեկավարության հետ ացնկացվող հարցազրույցների միջոցով:

Արդյունքները և տրամադրվող նյութերը

Կոմիտեի անվտանգությունն ապահովող տեխնիկական միջոցներ և մեթոդներ (Կիրառելիության մասին հաշվետվություն)

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Առաջադրանք 3. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում

Աջակցություն Կոմիտեին տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակման գործընթացում

Աշխատաքնի շրջանակները

Անհամապատասխանությունների վերլուծության և պլանավորման և հայեցակարգի մշակման փուլերի արդյունքների հիման վրա մենք կաջակցենք Կոմիտեին ISO 27001-2013 ստանդարտի համաձայն տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակման գործընթացում, որը կներառի հետևյալը.

- Աջակցություն ՏԱԿՀ քաղաքականության և անհրաժեշտ հիմունքների սահմանման գործընթացում,
- Աջակցություն տեղեկատվական անվտանգության կազմակերպման գործընթացի և համապատասխան պատասխանատվությունների սահմանման գործընթացում,
- Աջակցություն տեղեկատվական անվտանգության քաղաքականության և կից ստանդարտների մշակման գործընթացում, որոնք կադրադառնան առնվազն հետևյալ որոլտներին.
  - ՏԱԿՀ-ի շրջանակները,
  - Տեղեկատվական անվտանգության քաղաքականությունը և նպատակները,
  - Ռիսկերի գնահատման և կառավարման մեթոդաբանությունը,
  - Կիրառելիության մասին հաշվետվությունը,
  - Ռիսկերի կառավարման պլանը,
  - Ռիսկերի գնահատման հաշվետվությունը,
  - Անվտանգության գծով դերերի և պատասխանատվությունների սահմանումը,
  - Ակտիվների գույքագրումը,
  - Ակտիվների թույլատրելի օգտագործումը,
  - Մուտքի կառավարման քաղաքականությունը,
  - Գործառնական ընթացակարգերը տեղեկատվական տեխնոլոգիաների կառավարման համար,
  - Անվտանգության համակարգի նախագծման սկզբունքները,
  - Մատակարարների անվտանգության քաղաքականությունը,
  - Պատահարների կառավարման ընթացակարգը,
  - Գործունեության անընդհատությունն ապահավող ընթացակարգերը,
  - Իրավական, օրենսդրական և պայմանագրային պահանջները:

Արդյունքները և տրամադրվող նյութերը

ISO 27001-2013 ստանդարտի և կիրառելի օրենսդրության կամ կանոնակարգերի պահանջներին համապատասխանող տեղեկատվական անվտանգության քաղաքականություն և կից ստանդարտներ

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG

Ծառայությունների արժեքը և մատուցման ժամկետները

Ծառայությունների արժեքը

Պայմանները

Աշխատանքի շրջանակները	Ժամկետը	Արժեքը ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ
Փուլ 1. Դիագնոստիկ ստուգում	8 օր	1,600,000
Փուլ 2. Պլանավորում և հայեցակարգի մշակում	8 օր	1,600,000
Փուլ 3. Տեղեկատվական անվտանգության քաղաքականության մշակում	12 օր	2,800,000
Ընդամենը	**30-50 օր**	**6,000,000**

Ծառայությունների արժեքը հիմնված է աշխատանքի իրականացման համար պահանջվող ժամանակի, փորձի և հմտությունների գնահատականի վրա: Մեր մասնագետների անհատական ժամային դրույքաչափերը տատանվում են՝ կախված պատասխանատվության աստիճանից և փորձառությունից:

Վերը նշված արժեքները չեն ներառում ԱԱՀ-ն և ողջամիտ վերադիր ծախսերը: Վերադիր ծախսերը (առկայության դեպքում) կհաշվարկվեն «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատակիցների այցերի հետ կապված փաստացի կրած ծախսերի հիման վրա և կհատուցվեն առանձին:

Հետաքրքրված լինելու դեպքում մենք կարող ենք ներկայացնել այս առաջարկում չընդգրկված լրացուցիչ ծառայությունների մատուցման առանձին առաջարկ:

Աշխատանքի մոտավոր տևողությունը կկազմի մինչև 50 աշխատանքային օր:

Այս առաջարկը գործում է երկու ամիս և ենթակա է հաճախորդի/աշխատանքի ընդունման համար նախատեսված մեր ստանդարտ ընթացակարգերի իրականացման և շահերի բախման գծով ստուգման, ինչպես նաև ծառայությունների մատուցման «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի ստանդարտ պայմանները ներառող առանձին պայմանագրի բանակցման և ստորագրման: Տրամադրված տեղեկատվության որակը կարող է հանգեցնել Ծառայությունների արժեքի փոփոխմանը:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը



«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը

Իլյա Շալենկով

Տնօրեն, Տեղեկատվության պաշտպանություն և կիբերանվտանգություն, «Քեյ-Փի-Էմ-Ջի», Ռուսաստան և ԱՊՀ երկրներ

Իլյան տեղեկատվական անվտանգության, տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) հսկողության համակարգերի և SS աուդիտի ոլորտների փորձագետ է: Նա ղեկավարում է Տեղեկատվության պաշտպանության և կիբերանվտանգության ծառայությունների բաժինը «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի Մոսկվայի գրասենյակում:

Մոսկվայի Ն. Է. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարան, ինժեներ, տեղեկատության մշակման և հսկողության ավտոմատացված համակարգեր

Մոսկվայի Ն. Է. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարան, տնտեսագետ-կառավարիչ, ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում

CISA – Տեղեկատվական համակարգերի որակավորված աուդիտոր/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

CRISC – Ռիսկերի և տեղեկատվական համակարգերի հսկողության որակավորում/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

BS ISO/IEC 27001:2013 Lead Auditor – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի առաջատար աուդիտոր/Բրիտանական ստանդարտների ինստիտուտ

> 10 տարի

աշխատում է տեղեկատվական տեխնոլոգիաների, SS աուդիտի և տեղեկատվական անվտանգության ոլորտներում, որից ավելի քան վեց տարի «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի Մոսկվայի գրասենյակում:

Փորձ ոլորտներում. տեղեկատվության, հեռահաղորդակցության և լրատվության, տրանսպորտի ոլորտներ, սպառողական շուկաներ, արդյունաբերական շուկաներ

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը

Անդրեյ Դրոզդով

Ավագ մենեջեր, Տեղեկատվական ռիսկերի կառավարման գծով ծառայություններ մատուցող խումբ, «Քեյ-Փի-Էմ-Ջի», Ռուսաստան և ԱՊՀ երկրներ

Անդրեյը ճանաչված միջազգային փորձագետ է տեղեկատվական անվտանգության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում: Նա Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA) Մոսկվայի ներկայացուցչյան փոխնախագահն է: Մասնակցում է Ռուսաստանի բանկի տեղեկատվական անվտանգության ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պատրաստման գործընթացին ֆինանսական հատվածի համար: Վարում է դասախոսություններ:

Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարան, մաթեմատիկոսի որակավորում՝ կիրառական մաթեմատիկա մասնագիտացմամբ

CISA – Տեղեկատվական համակարգերի որակավորված աուդիտոր/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

CISM – Տեղեկատվական անվտանգության որակավորված պատասխանատու/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

CGEIT – Ձեռնարկության ՏՏ կառավարման որակավորում/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

BS ISO/IEC 27001:2013 Lead Auditor – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի առաջատար աուդիտոր/Բրիտանական ստանդարտների ինստիտուտ

Աուդիտոր, Ռուսաստանի բանկի ստանդարտ «Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգի կազմակերպությունների տեղեկատվական անվտանգության ապահովում. Ընդհանուր դրույթներ» (СТО БР ИББС 1.0)

Cobit 5 Foundation (ISACA/APMG)

> 30 տարի

աշխատում է տեղեկատվական տեխնոլոգիաների, ՏՏ աուդիտի և տեղեկատվական անվտանգության ոլորտներում, որից ավելի քան 20 տարի՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի Մոսկվայի գրասենյակում:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը

Մարկ Գորդեև

Ավագ մենեջեր, Տեղեկատվության պաշտպանություն և կիբերանվտանգություն, «Քեյ-Փի-Էմ-Ջի», Ռուսաստան և ԱՊՀ երկրներ

Մարկը տեղեկատվական անվտանգության, SS հսկողության համակարգերի և SS աուդիտի ոլորտների փորձագետ է: Նա մասնագիտացած է միջազգային և կորպորատիվ ստանդարտների համաձայն տեղեկատվական անվտանգության աուդիտի իրականացման և տեղեկատվական անվտանգության ներքին քաղաքականության մշակման բնագավառներում:

Մոսկվայի Ն. Է. Բաումանի անվան պետական տեխնիկական համալսարան, տեղեկատվության պաշտպանության մասնագետի որակավորում՝ ավտոմատացված համակարգերի տեղեկատվական անվտանգության համալիր ապահովում մասնագիտացմամբ

CISA – Տեղեկատվական համակարգերի որակավորված աուդիտոր/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

BS ISO/IEC 27001:2013 Lead Auditor – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի առաջատար աուդիտոր/Բրիտանական ստանդարտների ինստիտուտ

> 9 տարի

աշխատում է տեղեկատվական տեխնոլոգիաների, SS աուդիտի և տեղեկատվական անվտանգության ոլորտներում, որից ավելի քան վեց տարի «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի Մոսկվայի գրասենյակում:

Փորձ ոլորտներում. տեղեկատվության, հեռահաղորդակցության և լրատվության, տրանսպորտի ոլորտներ, սպառողական շուկաներ, ֆինանսական հատված, արդյունաբերական շուկաներ

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը

Արտյոմ Կոբեց

Ավագ խորհրդատու,
Տեղեկատվության պաշտպանություն և կիբերանվտանգություն,
«Քեյ-Փի-Էմ-Ջի»,
Ռուսաստան և ԱՊՀ երկրներ

Արտյոմը մասնագիտացած է տեղեկատվական անվտանգության խոցելիության պրակտիկ գնահատման և ներթափանցման թեստավորման ոլորտում: Նա փորձառու է վեբ հավելվածներ և ցանցային ենթակառուցվածքներ ներթափանցման թեստավորման բնագավառում, գերազանց տեղեկացված է հարձակման սցենարներին և ընդհանուր խոցելի ոլորտներին: Քաջատեղյակ է OSINT, OWASP, PTES, CEH մեթոդաբանություններին և ունի հարուստ տեխնիկական գիտելիքներ Unix և Windows պլատֆորմների և հարակից ենթակառուցվածքների վերաբերյալ:

Ազգային ավիացիոն համալսարան (Կիև, Ուկրաինա), Տեղեկատվական անվտանգություն ցանցերում և համակարգչային համակարգերում, մասնագետի որակավորում

Առանցքային հմտությունները ներառում են.

— Ներթափանցման թեստավորում. OSINT (օգտագործելով այնպիսի գործիքներ, ինչպիսիք են Maltego, Recon-ng և այլն), խոցելիության գնահատում (nmap, Nessus, Openvas), գործարկում (Metasploit), MITM, ցանցի պասիվ գաղտնալսում, փաթեթների ստուգում (Wireshark, ettercap, etherape), վեբ հավելվածներ ներթափանցման թեստավորում (Burp, ZAP, nikto, sqlmap, BeeF), անլար ցանցի թեստավորում (aircrack-ng), գաղտնաբռի կոտրում (hydra, john, l0phtcrack, medusa), պաշտպանված ցանցեր ներթափանցում,

— Գիտելիքներ ցանցային և անվտանգության տեխնոլոգիաների վերաբերյալ. TCP\IP, ֆայրվոլեր, VLAN, DMZ, պրոքսի, NAT, IPS/IDS, ուղղումների կառավարում, արխիվացումներ, գրանցումների վերլուծություն, VPN, հակավիրուսային ծրագրեր և այլն,

— Ծրագրավորման լեզուների իմացություն. PHP, assembly language, shell\powershell, C\C++, SQL, JavaScript,

— Unix և Windows համակարգերի ադմինիստրացիա և անվտանգություն. մուտքի հսկողություն (ACL), ֆայրվոլեր (ipfw, iptables), վեբ սերվերներ (Apache, nginx), IPS\IDS (snort), ամբողջականության ստուգում (tripwire), ուղղումների կառավարում (portaudit), հաքերային ծրագրի որոնում (rkhunter), այլ ցանցային ծառայություններ և գործառույթներ (NTP, NAT, squid, syslog, NFS, MySQL, Bind, chroot, jail, hast, ZFS, Postfix), ակտիվ դիրեկտորիա, խմբի քաղաքականություն, WSUS, IIS, տերմինալների ծառայություններ, MS SQL սերվեր:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի աշխատանքային խումբը

Տիգրան Թորոսյան
Ավագ խորհրդատու,
Տեղեկատվական ռիսկերի կառավարում,
«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ

Տիգրանը տեղեկատվական անվտանգության, SS/SA աուդիտների, տեղեկատվական ռիսկերի կառավարման և տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի ներդրման ոլորտների փորձագետ է:

Երևանի պետական համալսարան, ֆիզիկայի ֆակուլտետ, մագիստրոսի աստիճան

CISA – Տեղեկատվական համակարգերի որակավորված աուդիտոր/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

> 10 տարի

աշխատում է տեղեկատվական տեխնոլոգիաների, SS աուդիտի և տեղեկատվական անվտանգության ոլորտներում, որից ավելի քան հինգ տարի՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի Երևանի գրասենյակում:

Փորձ ոլորտներում. Ֆինանսական ծառայություններ (բանկեր, ապագովագրական, վարկային կազմակերպություններ), հեռահաղորդակցություն, մանրածախ առևտուր, կոմունալ ծառայություններ

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Համապատասխան փորձը

Համապատասխան փորձը

Մեր փորձագետներ հաջողված նախագծերի փորձ ունեն ISO27001 և 27002 պահանջների հետ համապատասխանության վերլուծության, տեղեկատվության պաշտպանության և կիբերանվտանգության ապահովման և պահանջվող փաստաթղթերի մշակման ոլորտներում: Նմանատիպ նախագծերը ներառում են.

Պատվիրատու	Մատուցված ծառայությունների հակիրճ նկարագիր
Խոշոր միջազգային բանկ	Տեղեկատվական անվտանգության ներքին քաղաքականության հետ ՏՏ և ՏԱ գործընթացների համապատասխանության գնահատում (ISO27002 պահանջների համաձայն)
Խոշոր եվրոպական դեղագործական ընկերություն	ՏՏ կառավարմն ռիսկերի վերլուծություն և գնահատում: Առաջարկությունների մշակում ՏԱ ռիսկերի կառավարման համար
Խոշոր ռուսական հանքարդյունաբերական ընկերություն	Տեղեկատվական անվտանգության գործառույթի վերլուծություն, ներառյալ՝ ISO/IEC 27001:2013 պահանջների հետ ՏԱԿՀ համապատասխանության վերլուծությունը
Խոշոր ռուսական հանքարդյունաբերական ընկերություն	ISO/IEC 27001:2013 պահանջների հետ ընտրված ՏԱԿՀ հսկողության մեխանիզմների համապատասխանության վերլուծություն
Ճապոնիայի ավտոմոբիլային կոնցեռնի գործարան Ռուսաստանում	ՏՏ և ՏԱ ռիսկերի գնահատում՝ առանցքային բիզնես գործընթացների խափանման ռիսկերի հետագա բացահայտման համար
Խոշոր բանկ	Վեբ հավելվածների անվտանգության գնահատում, ներառյալ՝ ինտերնետ բանկինգը և գործընկերների պորտալը
Միջազգային նավթագազային ընկերություն	Ներքին կորպորատիվ ցանց ներթափանցման թեստավորում

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի հետ համագործակցության առավելությունները

Մեր առավելությունները

Մենք ունենք հետևյալ առավելությունները, որոնք մեզ առանձնացնում են շուկայի մյուս ընկերություններից:

Մենք կիրառում ենք համալիր մոտեցում տեղեկատվական անվտանգության հարցերին՝ հաշվի առնելով թե՛ կազմակերպչական և թե՛ տեղնիկական ոլորտները

Մենք ունենք «էթիկական հաքերության» աշխարհի չեմպիոններ մեր աշխատանքային խմբում: Նրանք տարբեր հաքերների մրցումների հաղթողներ են:

Մեր աշխատանքի արդյունքները հասկանալի են ոչ միայն տեխնիկական մասնագետների, այլև նաև՝ բիզնես ղեկավարների համար

Մենք ունենք գաղտնի տեղեկատվության տեխնիկական պաշտպանության ապահովման ծառայություններ մատուցելու լիզենզիա տրված FSTEC- ի (Տեխնիկական և արտահանման վերահսկման դաշնային ծառայություն) կողմից

Մենք մուտքի հնարավորություն ունենք գիտելիքների «Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի համաշխարհային շտեմարան և հնարավորություն ունենք ներգրավելու միջազգային փորձագետներ

Մենք կիրառում ենք համապարփակ մոտեցում տեղեկատվական անվտանգությանը և ՏՏ կառավարման գործառույթին վերաբերող հարցերին և կենտրոնանում ենք թե՛ կազմակերպչական և թե՛ տեղնիկական հարցերի վրա

2015թ-ին « Forrester Research Inc.»- -ի համաձայն՝ «Քեյ-Փի-Էմ-Ջի International»-ը ճանաչվել է որպես առաջատար ընկերություն տեղեկատվական անվտանգության գծով խորհրդատվական ծառայությունների մատուցման ոլորտում

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Մեր հավաստագրերը

Մեր աշխատանքային խմբում ներառված են միջազգային հավաստագրեր ունեցող որակավորված մասնագետներ:

CISA – Տեղեկատվական համակարգերի որակավորված աուդիտոր/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

CISM – Տեղեկատվական անվտանգության որակավորված պատասխանատու/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

ITIL փորձագետ – ՏՏ ծառայությունների կառավարման որակավորում/EXIN

OSCP – անվտանգության որակավորված մասնագետ

CRISC – Ռիսկերի և տեղեկատվական համակարգերի հսկողության որակավորված մասնագետ/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

CISSP – Տեղեկատվական համակարգերի անվտանգության որակավորված մասնագետ/ Տեղեկատվական համակարգերի անվտանգության որակավորման միջազգային կոնսորցիում (ISC2)

CGEIT – Ձեռնարկության ՏՏ կառավարման որակավորում/ Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

BSI ISO/IEC 27001:2013 Lead Auditor – Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգերի առաջատար աուդիտոր ISO/IEC 27001:2013՝ համաձայն (դիմորդ)/Բրիտանական ստանդարտների ինստիտուտ (BSI)

CEH – Որակավորված էթիկական հաքեր/ Էլեկտրոնային առևտրի խորհրդատուների միջազգային խորհուրդ (EC-Council)

Cobit 5 Approved Trainer Foundation/Տեղեկատվական համակարգերի աուդիտի և հսկողության ասոցիացիա (ISACA)

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի մասին

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն հանդիսանում է աուդիտորական ընկերությունների «Մեծ քառյակի» ներկայացուցիչ, աուդիտորական, հարկային և խորհրդատվական ծառայություններ մատուցող մասնագիտական ընկերությունների համաշխարհային ցանց

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ի

154 երկների գրասենյակներում

աշխատում է >200,000 աշխատակից:

Մեր նպատակն է վերափոխել մասնագիտական գիտելիքներն իրական արժեքի ի շահ իր հաճախորդների, աշխատակիցների և կապիտալի միջազգային շուկաների:.

Հասույթ KPMG International

Մլրդ. ԱՄՆ դոլարով

© 2018 KPMG. KPMG refers to JSC "KPMG", "KPMG Tax and Advisory" LLC, companies incorporated under the Laws of the Russian Federation, and KPMG Limited, a company incorporated under The Companies (Guernsey) Law, as amended in 2008. All rights reserved.

«Քեյ-Փի-Էմ-Ջի»-ն Ռուսաստանում և ԱՊՀ երկրներում

** RAEX վարկանիշային գործակալության կողմից աուդիտորական ծառայություններից ստացված հասույթի չափով ճանաչվել է որպես աուդիտորական ծառայություններ մատուցող ամենախոշոր խումբը 2009-2017թթ.:*

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

kpmg.am

kpmg.com/app

Այս առաջարկում նշված ծառայությունների մատուցումը բոլոր առումներով ենթակա է բանակցման, համաձայնեցման և համապատասխան պայմանագրի ստորագրման: “KPMG International”-ը ծառայություններ չի մատուցում հաճախորդներին: Որևէ անդամ կազմակերպություն իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել “KPMG International”-ին կամ ցանկացած այլ անդամ կազմակերպության պարտականություններ հանձն առնել երրորդ անձանց հանդեպ: “KPMG International”-ը իր հերթին իրավասու չէ պարտադրել կամ պարտավորեցնել ցանկացած այլ անդամ կազմակերպության հանձն առնել նման պարտականություններ:

Այս առաջարկը ենթակա է 1. հաճախորդների/աշխատանքների ընդունման համար նախատեսված մեր ստանդարտ ընթացակարգերի իրականացման և շահերի բախման գծով ստուգման 2. մեր գործունեության իրականացման ընդհանուր պայմանները ներառող առանձին պայմանագրի բանակցման, համաձայնեցման և ստորագրման:

Այս առաջարկում ներկայացված անձնական տվյալները ենթակա են մշակման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

© 2019 «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ, ՀՀ օրենսդրության համաձայն գրանցված, շվեյցարական KPMG International Cooperative (“KPMG International”) կազմակերպությանն անդամակցող «Քեյ-Փի-Էմ-Ջի» անկախ ֆիրմաների ցանցի անդամ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

KPMG անվանումը և KPMG լոգոտիպը KPMG International կազմակերպության գրանցված ապրանքային նշաններն են:

Փաստաթղթի դասակարգումը. «Քեյ-Փի-Էմ-Ջի» գաղտնի